ԽՈՒՄԲ 3

59 հարց

ABC կարգեր · տեսական հարցաշար

1. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Թեթեւ մարդատար ավտոմոբիլների դողերի պահպանաշերտի մնացորդային բարձրությունը կազմում է 1.8 մմ:
2. **Խախտված է հիդրավլիկ արգելակային հաղորդակի հերմետիկությունը:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

2. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Բեռնատար ավտոմոբիլի դողերի պահպանաշերտի մնացորդային բարձրությունը կազմում է 1.6 մմ:
2. **Չի գործում պնեւմատիկ արգելակային հաղորդակի ճնշաչափը:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

3. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Առկա են ղեկային կառավարման դետալների ու հանգույցների՝ կառուցվածքով չնախատեսված տեղաշարժեր կամ պարուրակային միացումները ձգված չեն:
2. Բեռնատար ավտոմոբիլում բացակայում է կրակմարիչը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

4. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Սահմանված ռեժիմով չեն աշխատում արտաքին լուսային սարքերը:
2. Մոտոցիկլի դողերի պահպանաշերտի մնացորդային բարձրությունը կազմում է 0.6 մմ:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

5. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. **Չեթին հակամառախուղային լապտերիկները միացված են տրանսպորտային միջոցի արգելակումն ազդարարող լուսային սարքերին:**
2. Չի աշխատում շարժիչը հովացնող հեղուկի ջերմաստիճանի ցուցիչը:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

6. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Շարժիչն աշխատում է ընդհատումներով:
2. **Դողերն ունեն անվադողի հենքը (կորդը) մերկացնող տեղային վնասվածքներ:**
3. Չեն աշխատում թեթեւ մարդատար ավտոմոբիլի սրահի ներքին լուսավորության սարքերը:
4. Թվարկած բոլոր դեպքերում:

Պատ.՝ 2

---

7. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Առանց կողային կցորդի մոտոցիկլում բացակայում է «Վթարային կանգառ» նշանը:
2. **Դողերը չափերով կամ թույլատրելի բեռնվածությամբ չեն համապատասխանում տրանսպորտային միջոցի տվյալ մոդելին:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

8. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Բացակայում է դողի անվահեցի ամրացման հեղյուսներից թեկուզ մեկը:
2. Նույն սռնու վրա տեղադրված են պահպանաշերտի տարբեր նախշանկարներով դողեր:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

9. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Բացակայում են կառուցվածքով նախատեսված նստատեղերի գլխակալները:
2. Նույն սռնու վրա տեղադրված են նոր եւ վերականգնված դողեր:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

10. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Արտածվող գազերում վնասակար նյութերի պարունակությունը գերազանցում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:
2. Մոտոցիկլի վրա բացակայում են կառուցվածքով նախատեսված ոտնատեղերը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

11. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Խախտված է շարժիչի հենատուփի օդափոխության համակարգի հերմետիկությունը:
2. Խախտված է շարժիչի սնման համակարգի հերմետիկությունը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

12. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Խախտված է շարժիչի հենատուփի օդափոխության համակարգի հերմետիկությունը:
2. Նույն սռնու վրա՝ տեղադրված են ցրտադիմացկուն եւ ոչ ցրտադիմացկուն դողեր:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

13. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Չեն աշխատում կառուցվածքով նախատեսված ապակեողողիչները:
2. Շարժիչի արտաքին աղմուկի թույլատրելի մակարդակը գերազանցում է ստանդարտով սահմանված նորմերը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

14. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Շարժիչն աշխատում է ընդհատումներով:
2. Հետին հակամառախուղային լապտերիկները միացված չեն արգելակումն ազդարարող լուսային սարքերին:
3. **Չեն աշխատում տրանսպորտային միջոցի՝ կառուցվածքով նախատեսված ապակեողողիչները:**
4. Թվարկած բոլոր դեպքերում:

Պատ.՝ 3

---

15. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Տեղադրված են երթեւեկության մասնակիցներին վնասվածքներ հասցնելու վտանգ պարունակող իրեր կամ առարկաներ:
2. Չի աշխատում ձայնային ազդանշանի սարքը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

16. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. **Մոտոցիկլի եւ կողային կցորդի շրջանակների միացումներում առկա է խաղացք:**
2. Առջեւի մասում տեղադրված են դեղին գույնի լույսերով հակամառախուղային լապտերներ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

17. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. **Բեռնատար ավտոմոբիլում բացակայում է բժշկական դեղատուփը:**
2. Առջեւի մասում տեղադրված են սպիտակ գույնի լուսանդրադարձնող հարմարանքներ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

18. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Կողային կցորդով մոտոցիկլում բացակայում է բժշկական դեղատուփը:
2. Անսարք է քարշակի հենակցման հարմարանքը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

19. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Չեն աշխատում տրանսպորտային միջոցի կառուցվածքով նախատեսված անվտանգության ամրագոտիները:
2. Տեղադրված են վարորդի նստատեղից նրա տեսադաշտը սահմանափակող իրեր կամ առարկաներ:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

20. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. **Առանց տրանսպորտային միջոցի հաշվառումն իրականացնող մարմնի թույլտվության՝ տրանսպորտային միջոցի կառուցվածքում կատարված են փոփոխություններ (վերասարքավորումներ):**
2. Առջեւի մասում տեղադրված են դեղին գույնի լույսերով շրջադարձի ցուցիչներ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

21. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. **Մեխանիկական տրանսպորտային միջոցը, որով իրականացվում է գործնական վարման ուսուցումը, չունի համապատասխան ճանաչման նշան:**
2. Չի աշխատում վառելիքի մակարդակի ցուցիչը:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

22. Մոտոցիկլների շահագործումն արգելվում է, եթե

1. **Բացակայում են կառուցվածքով նախատեսված անվտանգության աղեղները:**
2. Դողերի պահպանաշերտի նվազագույն մնացորդային բարձրությունը կազմում է 1,6 մմ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

23. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Առջեւի մասում տեղադրված են դեղին գույնի լույսերով շրջադարձի ցուցիչներ:
2. **Բացակայում է դողի անվահեցի ամրացման հեղյուսներից թեկուզ մեկը:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

24. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Առջեւի մասում տեղադրված են նարնջագույն լույսերով շրջադարձի ցուցիչներ:
2. **Անսարք է քարշակի քարշակցման հարմարանքը:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

25. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Առջեւի մասում տեղադրված են սպիտակ գույնի լուսանդրադարձնող հարմարանքներ:
2. **Անսարք է քարշակի քարշակցման հարմարանքը:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

26. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. **Բացակայում են կառուցվածքով նախատեսված անվտանգության ամրագոտիները:**
2. Հետեւի մասում տեղադրված են սպիտակ գույնի լույսերով հետընթացի լապտերիկներ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

27. **Կողային կցորդով մոտոցիկլների շահագործումն արգելվում է, եթե**

1. Բացակայում է կառուցվածքով նախատեսված թամբի վրայի ուղեւորի համար լայնակի բռնատեղը:
2. Դողերի պահպանաշերտի մնացորդային բարձրությունը կազմում է 0.6 մմ:
3. Բացակայում է բժշկական դեղատուփը:
4. **Թվարկած բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 4

---

28. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Չեն աշխատում թեթեւ մարդատար ավտոմոբիլի սրահի ներքին լուսավորության սարքերը:
2. **Բացակայում են կառուցվածքով նախատեսված նստատեղերի գլխակալները:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

29. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝**

1. Հետեւի մասում տեղադրված են կարմիր գույնի լուսանդրադարձնող հարմարանքներ:
2. **Չի աշխատում կառուցվածքով նախատեսված արագաչափը:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

---

30. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝**

1. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի ղեկային կառավարման համակարգի գումարային խաղացքը գերազանցում է 10 աստիճանը:
2. Բացակայում են կառուցվածքով նախատեսված ցեխապաշտպան գոգնոցները եւ ցայտապաշտպանիչները:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

31. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Թեթեւ մարդատար ավտոմոբիլում բացակայում է բժշկական դեղատուփը:
2. Հետեւի մասում տեղադրված են կարմիր գույնի լույսերով հետընթացի լապտերիկներ:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

32. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլի կցորդի դողերի պաշտպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը պակաս է 1,6 մմ-ից:**
2. Հետեւի մասում տեղադրված են նարնջագույն լույսերով շրջադարձի ցուցիչներ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

---

33. **Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե**

1. Խախտված է հիդրավլիկ արգելակային հաղորդակի հերմետիկությունը:
2. Հետեւի մասում տեղադրված են սպիտակ գույնի լույսերով շրջադարձի ցուցիչներ:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

---

34. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Նույն սռնու վրա տեղադրված են տարբեր կառուցվածքների դողեր:
2. Խախտված է շարժիչի սնման համակարգի հերմետիկությունը:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

35. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. **Չի աշխատում ձայնային ազդանշանի սարքը:**
2. Հովացման համակարգը չի ապահովում շարժիչի աշխատանքի կայուն ջերմային ռեժիմը:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

36. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. **Առկա են ղեկային կառավարման դետալների ու հանգույցների՝ կառուցվածքով չնախատեսված տեղաշարժեր:**
2. Առջեւի մասում տեղադրված են սպիտակ գույնի լույսերով շրջադարձի ցուցիչներ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

37. Տրանսպորտային միջոցի շահագործումն արգելվում է, եթե

1. Շարժիչն աշխատում է ընդհատումներով:
2. **Դողերն ունեն անվադողի հենքը (կորդը) մերկացնող տեղային վնասվածքներ:**
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 2

38. Թեթև մարդատար ավտոմոբիլի շահագործումն արգելվում է, եթե

1. **Բացակայում է բժշկական դեղատուփը:**
2. Դողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը կազմում է 2,2 մմ:
3. Երկու դեպքում էլ:

Պատ.՝ 1

39. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե

1. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի բազայի վրա պատրաստված ավտոբուսի մոտ ղեկային կառավարման համակարգի գումարային խաղանցքը գերազանցում է 10 աստիճանը:
2. Բացակայում են կառուցվածքով նախատեսված ցեխապաշտպան գոգնոցները եւ ցայտապաշտպանիչները:
3. **Երկու դեպքում էլ:**

Պատ.՝ 3

40. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե չի աշխատում կառուցվածքով նախատեսված թափքի դռան փականը:
2. Եթե չի աշխատում կառուցվածքով նախատեսված խցիկի դռան փականը:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

41. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե հետևի մասում տեղադրված են կարմիր գույնի լույսերով շրջադարձի լուսային ցուցիչներ:
2. **Եթե բացակայում է կառուցվածքով նախատեսված հետին պաշտպանիչ հարմարանքը:**
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 2

---

42. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. **Եթե անսարք է կամ բացակայում է կառուցվածքով նախատեսված ղեկային կառավարման ուժեղարարը:**
2. Եթե չի աշխատում ձայնարկիչը:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

---

43. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե կայանման արգելակային համակարգը ստանդարտով սահմանված թեքության վրա չի ապահովում անշարժ վիճակ:
2. Եթե խախտված է փոխանցման տուփի կիպարարների հերմետիկությունը:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

---

44. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե չի աշխատում պահեստային անիվի բռնիչը:
2. Եթե խախտված է հետին կամրջակի կիպարարների հերմետիկությունը:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

---

45. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. **Եթե կառուցվածքով նախատեսված անվտանգության ամրագոտիների ժապավենի վրա առկա են տեսանելի պատռվածքներ:**
2. Եթե կահավորված չէ հակամառախուղային լապտերիկներով:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

---

46. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. **Եթե չի աշխատում կառուցվածքով նախատեսված շարժիչի ծածկոցի փականը:**
2. Եթե վարագուրապատված են հետին կողային ապակիները, և առկա են հետին տեսանելիության 2 կողային հայելիները:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

---

47. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե վարագուրապատված են հետին կողային ապակիները, և բացակայում են հետին տեսանելիության 2 կողային հայելիները:
2. Եթե չեն աշխատում կառուցվածքով նախատեսված ապակիների տաքացման ու փչահարման սարքերը:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

48. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե չի աշխատում կառուցվածքով նախատեսված վառելիքի բաքի խցանը:
2. Եթե առջևի կողային ապակիները վարագուրապատված են:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

49. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե ձայնային ազդանշանի սարքով տրվող ազդանշանը չի աշխատում:
2. Եթե բացակայում են տրանսպորտային միջոցի կառուցվածքով նախատեսված ապակիները:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

50. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե անվահեցի կամ անվասկավառակի վրա առկա են ճաքեր:
2. Եթե անվահեցի ամրացման անցքերի ձևի և չափերի տեսանելի խախտումներ են առկա:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

51. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. **Եթե կեղտոտված են արտաքին լուսային սարքերը և լուսանդրադարձիչները:**
2. Եթե կեղտոտված են առջևի և հետին պաշտպանիչ հարմարանքները:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

52. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե լուսային սարքերի վրա բացակայում են լամպերը կամ ցրիչները:
2. Եթե օգտագործվում են տվյալ լուսային սարքի տեսակին չհամապատասխանող ցրիչներ կամ լամպեր:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

53. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. **Եթե կեղտոտված են արտաքին լուսային սարքերը և լուսանդրադարձիչները:**
2. Եթե արտադրությունից հանված տրանսպորտային միջոցի վրա տեղադրված է այլ մակնիշի տրանսպորտային միջոցի արտաքին լուսային սարքեր:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

54. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. **Եթե տրանսպորտային միջոցի նույն սռնու վրա տեղադրված են պահպանաշերտի տարբեր նախշանկարներով դողեր:**
2. Եթե թեթև մարդատար ավտոմոբիլի դողի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը կազմում է 1,6մմ:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1

---

55. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե բեռնատար ավտոմոբիլի դողի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը կազմում է 1,4մմ:
2. **Եթե առջևի մասում տեղադրված են դեղին գույնի լուսաանդրադարձնող հարմարանքներ:**
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 2

---

56. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե հետևի մասում տեղադրված են դեղին գույնի լուսաանդրադարձնող հարմարանքներ:
2. Եթե առջևի մասում տեղադրված են դեղին գույնի լուսաանդրադարձնող հարմարանքներ
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

---

57. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե հետևի մասում տեղադրված է «Մեծ եզրաչափերով բեռ» ճանաչման նշանը՝ սպիտակ և կարմիր գույնի լուսաանդրադարձնող գծերով:
2. Եթե մոպեդի դողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը կազմում է 0,7մմ:
3. **Երկու դեպքերում էլ:**

Պատ.՝ 3

---

58. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. Եթե բժիշկ-վարորդի կողմից վարած ավտոմոբիլի վրա բացակայում է «Բժիշկ» ճանաչման նշանը:
2. **Եթե չի աշխատում կառուցվածքով նախատեսված վառելիքի բաքի խցանը:**
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 2

---

59. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է

1. **Եթե տրանսպորտային միջոցի նույն սռնու վրա տեղադրված են պահպանաշերտի տարբեր նախշանկարներով դողեր:**
2. Եթե առջևի մասում դեղին լուսանդրադարձնող հիմնագույնով և կամիր լուսանդրադարձնող եզրագծերով տեղադրված է «Երեխաների փոխադրում» ճանաչման նշանը:
3. Երկու դեպքերում էլ:

Պատ.՝ 1
